ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐՏԱԿ
Գավառի պետական համալսարանի ասպիրանտ
e-mail:_*artak_martirosyan@yahoo.com*

Սույն հոդվածով ներկայացված է Հովհաննես Թումանյանի գրական ստեղծագործությունների և ապահովագրության կապը: Հոդվածով հիմնավորվում է, որ Հովհաննես Թումանյանի ստեղծագործություններն հնարավոր է կիրառել ֆինանսական կրթման բնագավառում որպես ապահովագրության տարբեր տեսակները, ապահովագրության սկզբունքները և մոտեցումները հնարավորինս մատչելի ներկայացնելու մեթոդ:

Բանալի բառեր՝ ապահովագրություն, գյուղատնտեսության ապահովագրություն, Թումանյանի ստեղծագործություններ, ֆինանսական կրթում, ապահովագրության տեսակներ, պատասխանատվության ապահովագրություն, գույքի ապահովագրություն, աջակցության ապահովագրություն, դժբախտ պատահարներից ապահովագրություն, բեռների ապահովագրություն:

Հազար ութ հարյուր վաթսունինն թվին
Հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին,
Հայոց արտերում ի՞նչ բերք էր հասել,-
Դժվար է ասել:
Սակայն այդ թվին Մայր Հայաստանի
Արգանդը եղավ սրբորեն բեղուն:
Մի մանուկ ծնվեց Լոռվա Դսեղում...

Պարույր Սևակ, «Անլռելի զանգակակատուն»

Հովհաննես Թումանյանն իր ստեղծագործություններում բազմիցս անդրադառնում է մեր առօրյա կյանքում առկա խնդիրներին, միջանձնային հարաբերություններին և բացառապես իր տաղանդին բնորոշ հմտությամբ իր հայտնի հերոսների միջոցով ի ցույց է դնում այդ խնդիրները ծնող պատճառները՝ իհարկե խնդիրների լուծման տարբերակները կամ խնդիրներից խուսափելու հնարավորությունները թողնելով ընթերցողին:

Ապահովագրությունը որոշակի վճարի դիմաց ռիսկի (առօրյայում կանխատեսելի խնդիրներ) փոխանցումն է մի սուբյեկտից մեկ այլ սուբյեկտի: Ռիսկի կառավարման տեսակ է:

Ապահովագրության վերը նշված ամենապարզ սահմանումն էլ հիմք է հանդիսացել մեզ համար հայտնվել Թումանյան-ապահովագրություն ի սկզբանե անհավանական թվացող հատման կետում կամ խաչմերուկում և շարունակել մեր հետագա ճանապարհը՝ ուսումնասիրելով և վերլուծելով չափազանց հետաքրքիր այդ կապը Թումանյանի ստեղծագործությունների և ապահովագրության տարբեր տեսակների միջև:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք, որ Թումանյանի ստեղծագործություններն այնքան հագեցած են ապահովագրության տարբեր տեսակներով, ապահովագրությանը բնորոշ մոտեցումներով և սկզբունքներով, որ հնարավոր է և նույնիսկ անխուսափելի է, հետագայում ֆինանսական կրթման ծրագրերում ապահովագրությունը ներկայացնել Թումանյանի ստեղծագործությունների միջոցով, ինչն ավելի տպավորիչ և մատչելի կդարձնի ապահովագրությունը:

«Կիկոսի մահը» -Դժբախտ պատահարներից ապահովագրություն:

Կիկոսի մահը ստեղծագործությամբ շատ պարզ ձևով հնարավոր է ներկայացնել դժբախտ պատահարների ապահովագրությունը: Իհարկե, ստեղծագործությամբ անդրադարձ է կատարվում միայն դժբախտ պատահարներից ապահովագրությանը մահվան ելքի դեպքում, սակայն ստեղծագործությունը հնարավորություն է ընձեռում ներկայացնել դժբախտ պատահարներ անձնական ապահովագրության տեսակը՝ ըստ էության, նաև բացահայտելով տվյալ տեսակի ապահովագրության մնացած հնարավորությունները նույնպես՝ դժբախտ պատահարի հետևանքով առաջացած բժշկական ծախսերի փոխհատուցում հաշմանդամություն, չաշխատած ժամանակի համար փոխհատուցում և այլն:

- Հիմի որ ես մարդի գնամ ու մի որդի ունենամ, անունն էլ դնենք Կիկոս: Կիկոսը գա էս ծառին բարձրանա ու վեր ընկնի, քարովը դիպչի մեռնի...

Դժբախտ պատահարներից ապահովագրությունը հատուցում է ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձության հետևանքով անձի կյանքին կամ առողջությանը հասցված վնասները: Դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում ապահովագրական հատուցում է վճարվում դժբախտ պատահարի հետևանքով ապահովագրված անձի ժամանակավոր կամ մշտական անաշխատունակության կամ մահվան դեպքում:

Որպես կանոն դժբախտ պատահարների ապահովագրությունը ներառում է հետևյալ ռիսկերը.

- մահ՝ դժբախտ պատահարի հետևանքով,
- մշտական անաշխատունակություն՝ դժբախտ պատահարի հետևանքով,

- ժամանակավոր անաշխատունակություն՝ դժբախտ պատահարի հետևանքով

1. «Պոչատ աղվեսը» -Գույքի ապահովագրություն:

Լինում է, չի լինում՝ մի պառավ. էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր դնում, գնում է ցախ ու փեսի բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ուտում:

- Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞ւրտեղ էիր:

Պառավն ասում է.

- Դե գնա իմ կաթը բե՛ր:

Գույքի ապահովագրությունը հատուցում է ապահովագրված անշարժ կամ շարժական գույքին հասցված վնասները, որոնք առաջացել են ապահովագրության պայմանագրում նշված պատահարներից որևէ մեկի արդյունքում:

Որպես կանոն, ապահովագրվում է գույքի կորուստը, վնասումը, կործանումը կամ ոչնչացումը, որն առաջացել է հետևյալ պատճառներից առնվազն մեկի հետևանքով՝

- հրդեհ կամ պայթյուն,
- երկրաշարժ,
- ջեռուցման, ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգի վթար,
- ծառի, թռչող օբյեկտի, դրանց բեկորի ընկնում, կամ վերգետնյա փոխադրամիջոցի վրաերթ,
- երրորդ անձի կողմից իրականացված չարամիտ գործողություն,
- կարկուտ, ջրհեղեղ կամ տեղատարափ անձրև,
- փոթորիկ կամ ուժեղ քամի,
- գողություն կամ հափշտակություն:

2. «Մի կաթիլ մեղրը» - Ընդհանուր պատասխանատվության ապահովագրություն:

Մի գյուղացի իրենց գյուղում
Խանութ սարքել, բան էր ծախում:
Էսպես հանգիստ, էսպես սիրով,
Մեղրից անուշ լավ խոսքերով
Մեղր են քաշում. մին էլ հանկարծ
Մի կաթ մեղրը ծորում է ցած:
— Տը՛զգ, էն կողմից մի ճանճ գալի,
Էս կաթիլին վեր է գալի:
Ճանճի վրրա, թաքուն-թաքուն,
Էս խանութի փիրոջ կատուն
Դուրս է ցատկում,
Թաթով զարկում...

Ու դուրս եկան իրարու դեմ,
Հա՛ զարկեցին ու զարկեցին,
Կոտորեցին, կըրակեցին,
Ինչքան ավել կոտորեցին,
Էնքան ավել կատաղեցին,

Պատասխանատվության ապահովագրությունը ոչ կյանքի ապահովագրության լայն տարածում ունեցող ճյուղերից է, որտեղ ապահովագրության օբյեկտ է հանդիսանում ապահովադրի՝ օրենքով կամ պայմանագրերով սահմանված պատասխանատվությունը երրորդ անձանց պատճառված վնասների գծով: Ձեռնարկությունները, կազմակերպությունները կամ քաղաքացիները իրենց գործունեության ընթացքում կարող են վնաս հասցնել երրորդ անձանց կյանքին, գույքին կամ առողջությանը, ինչը ենթակա է փոխհատուցման: Պատասխանատվության ապահովագրության էությունն այն է, որ ապահովադիրները, վճարելով ապահովագրավճար, ապահովագրողներին են փոխանցում երրորդ անձանց իրենց կողմից հասցված վնասի փոխհատուցումը: Պատասխանատվության ապահովագրությունը ունի երկակի նշանակություն. առաջին հերթին այն պաշտպանում է ապահովադիրներին կորուստներ կրելուց, երբ անհրաժեշտություն է առաջանում փոխհատուցելու իրենց գործունեության արդյունքում տուժածներին հասցված վնասը: Երկրորդ՝ տուժածներին երաշխավորում է կրած վնասի փոխհատուցումը: Հատկապես այս հանգամանքը հաշվի առնելով՝ շատ երկրներում պատասխանատվության ապահովագրության որոշ տեսակներ կրում են պարտադիր բնույթ, քանզի անկախ վնաս հասցնողի վճարման հնարավորությունից և կամքից, պետք է երաշխավորված լինի տուժողի կողմից կրած վնասի փոխհատուցումը:

3. «Շունն ու կատուն» - Մասնագիտական պատասխանատվության ապահովագրություն:

- Դե հե՛ր օրհնած, էտե՛նց ասա,
Էդ բարկանալդ էլ ընչի՞ս ա:
Փող եմ տըվել, վախտին կարի,
Թե չէ՝ ասա, էգուց արի:
Համ ասում ես, համ չես կարում,

Մասնագիտական պատասխանատվության ապահովագրությունը պաշտպանվածություն է ընձեռում այն անձանց, որոնք զբաղվում են իրենց հաճախորդներին մասնագիտական ծառայությունների մատուցմամբ և իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում ակամայից թույլ են տալիս անզգուշություններ, սխալներ, չկանխատեսված բացթողումներ, ինչի հետևանքով վնաս են հասցնում հաճախորդներին, որոնք ի սկզբանե վստահում էին նրանց՝ համոզված լինելով վերջիններիս մասնագիտական հմտության նկատմամբ:

Ապահովագրվում է սնանկության գործով կառավարիչների, աուդիտորների, հաշվապահների, փաստաբանների, նոտարների, բժիշկների և այլ մասնագետների կողմից ծառայությունների մատուցման դեպքում նրանց գործողությունների կամ անգործության հետևանքով առաջացած քաղաքացիական պատասխանատվության ռիսկը:

4. «Ծիտը»-Պայմանագրային պարտավորությունների ապահովագրություն:

- Նանի՛ ջան, նանի՛, ուրիս փուշը հանի, թոնիրդ վառի, ես էլ գնամ քուջուջ անեմ, գլուխս պահեմ:

Պառավը փուշը հանում է, թոնիրը վառում:

Ծիտը գնում է, եր գալի, թե՝ փուշը եր տուր ինձ:

Պայմանագրային պարտավորությունների ապահովագրությունը ընդհանուր պատասխանատվության ապահովագրության տեսակներից է, որով փոխհատուցվում եմ պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման հետևանքով առաջացած վնասները:

5. «Ձախորդ Փանոսը»-Աջակցության ապահովագրություն կամ ճանապարհորդության ապահովագրություն:

Փանոսը լճից դուրս է գալի, տեսնում շոր չկա: Մնում է տկլոր կանգնած:

Փանոսը ցավից վայ՛վայ անելով եր է դառնում, շներն էս ձենի վրա վեր են կենում, տեսնում են, օհո՛, մթնումը հրես մի տկլոր օքմին, ու չորս կողմից վրա են տալիս: Շների հաչոցի վրա մարդիկ դուրս են թափվում, տեսնում են՝ մի տկլոր մարդ փախած գնում է, շները եր հետևից:

Շներն էլ եր հետևիցը մի ճուռը պոկում են, ու էսպես տկլոր, աչքը հանած, կաղին տալով՝ խեղճ Փանոսը գնում է կորչում:

Աջակցության ապահովագրությունը հատուցում է արտասահմանում գտնվելու ընթացքում ապահովագրված անձի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ նրա առողջական վիճակի վատթարացման հետևանքով առաջացած ծախսերը:

Աջակցության ապահովագրության շրջանակներում հատուցման ենթակա են հետևյալ ծախսերը՝

- անհետաձգելի (շտապ) բժշկական ծառայության ծախսերը,
- ապահովագրական պատահարի ժամանակ առաջացած բուժտրանսպորտային ծառայությունների ծախսերը,
- հայրենադարձության հետ կապված ծախսերը,
- ծախսեր, որոնք իրականացվել են ապահովագրական պատահարի մասին աջակցող ընկերությանը կամ ապահովագրողին տեղեկացնելիս:

6. «Տերն ու ծառան» - Գործազրկության ապահովագրություն:

- Հը՞, դու բարկանո՞ւմ ես,- կանգնում է գլխին հարուստը: - Երբոր բարկանում ես, մեր պայմանը պայման է: Էլ չասես, թե քեզ հետ առանց իրավունքի վարվեցին:

Ու պայմանի ուժով սփիպում է՝ ծառան կամ հազար մաներթ տուգանք տա կամ տասը տարի ձրի ծառայի:

Գործազրկության ապահովագրությունը փոխհատուցում է այն վնասները, որոնք առաջացել են աշխատանքային օրենսդրությանը համապատասխան դեպքերում աշխատանքը կորցնելու հետևանքով՝ աշխատաժամանակի կրճատում, հաստիքի կրճատում, գործատուի լուծարում և այլն: Ապահովագրված անձը ապահովագրության պայմանագրով սահմանված որոշակի ժամկետում և չափով՝ առավելագույնը աշխատավարձի չափին համապատասխան ստանում է փոխհատուցում մինչև նոր աշխատանքի անցնելը կամ սահմանված ժամկետի ավարտը: Որպես կանոն՝ կիրառվում է վարկառուների համար, քանի որ ֆինանսավորող կազմակերպությունները վարկ տրամադրելիս հիմնականում առաջնորդվում են աշխատավարձի չափով, իսկ վարկառուի գործազրկության ռիսկի ապահովագրություն չունենալու դեպքում հնարավոր է ունենան ժամկետանց մարումներ և խնդրահարույց վարկեր:

7. «Ոսկու կարասը» - Ամուսնության ապահովագրություն:

Դուրս է գալի, որ մինը մի տղա ունի, մյուսը՝ մի աղջիկ: Իմաստունները վճռում են, որ սրանք գնան իրենց աղջիկն ու տղեն իրար հետ պսակեն, էն գտած ոսկին էլ տան նրանց:

Ամուսնության ապահովագրությունը կյանքի ապահովագրության տեսակներից է, համաձայն որի կուտակային սկզբունքով հավաքագրվում են ապահովագրավճարները, իսկ տվյալ դեպքում ապահովագրական պատահար է համարվում ապահովագրված անձի ամուսնությունը, որից հետո ապահովագրված անձը ստանում է ապահովագրության պայմանագրին համապատասխան փոխհատուցում՝ տարաժամկետ կամ միանվագ եղանակով:

8. «Անբախտ վաճառականները» - Բեռների ապահովագրություն:

Մի օր Չղջիկն ու Ճայն եկան
Թե՝ ե՛կ դառնանք վաճառական:
Չիղջը մընաց, տընպահ դառավ,
Ճայը բոլոր փողերն առավ,
Առավ, նըստեց նավի միջին,
Հասավ Մըսըր, Չինումաչին,
Ֆարս, Հընդըստան,
Արաբըստան...
Ինչ որ տեսավ, աչքը սիրեց,
Առատ-առատ նավը լըցրեց.

Նավը լցրեց հազար բարով
Ու եր՝ եկած ճանապարհով
Ուրախ-ուրախ տուն էր գալի:
Ճամփին ծովում սարսափելի
Ալեկոծում, մըրրիկ ելավ,
Հարկեց, փարավ ապրանք ու նավ:

Բեռների ապահովագրության միջոցով փոխհատուցվում են տրանսպորտային միջոցով (այդ թվում՝ երկաթուղային, օդային, ցամաքային և ծովային) գույքի տեղափոխման ընթացքում բեռի վնասման հետևանքով սեփականատիրոջ կրած վնասները, այդ թվում նաև բեռնափոխադրման համար կատարված ծախսերը:

Որպես կանոն, ապահովագրվում է բեռի կորուստը, վնասումը, կործանումը կամ ոչնչացումը, որն առաջացել է հետևյալ պատճառներից առնվազն մեկի հետևանքով՝

- հրդեհի կամ պայթյունի,
- տարերային աղետների,
- տրանսպորտային միջոցի հետ տեղի ունեցած վթարի, բախման կամ շրջման, խորտակման և այլն,
- չնախատեսված վայրում, հատուկ պայմաններում բեռնաթափման,
- բեռնման, տեղավորման, բեռնաթափման և փոխադրամիջոցի՝ վառելիքով լցավորման հետևանքով բեռի վնասման և այլն:

9. «Հառաչանք» - Գյուղատնտեսության ապահովագրություն:

«Հառաչանք» պոեմը կարդալիս տպավորություն է ստեղծվում, որ Թումանյանը ստեղծագործելիս նպատակ է ունեցելել բարձրաձայնել գյուղատնտեսությունում առկա ռիսկերը, չարդարացված ծախսերը և հիմնավորել Հայաստանում գյուղատնտեսության ապահովագրության ներդրման անխուսափելիությունը, նույնիսկ շոշափում է վիճակագրական տվյալների բացակայության խնդիրը և անդրադառնում է հողերի մասնատված լինելու հանգամանքին, որը, ցավոք սրտի, դեռևս մինչև այսօր արդիական է և խնդրահարույց:

Մեր ապրուստն ի՞նչ է. - մի կտոր չոր հաց,
Էն էլ հըրեն հա՛ - երկընքից կախված:
Վազներից էնքան օգուտ չի գալի,
Ինչ նրանց համար ես փող եմ տալի.
Գողն էլ մի կըռնից, գելն էլ մյուս կըռնից,
Աչքըդ թեքեցիր - բանիդ տերը չես.
Մեկին մեր գյուղում մի թիզ հող ունի,
Թըքես մի ծերից մյուս ծերը կընկնի.
Ոչ ինքն է վարում, ոչ տալիս մեկին,
Բուռն է հավաքել գյուղացու հոգին:

Գյուղատնտեսության ապահովագրության միջոցով փոխհատուցվում են գյուղատնտեսությունում առկա ռիսկերի հետևանքով (կարկուտ, ցրտահարություն, երաշտ, վայրի գազանների հարձակում, հիվանդություններ և այլն) տնտեսվարողների կրած վնասները: Ապահովագրության ենթակա են գյուղատնտեսական մշակաբույսերը, պտղատու այգիները, ակնկալվող բերքը, գյուղատնտեսական նշանակության կենդանիները, գյուղատնտեսական նշանակության մեքենասարքավորումները, շինությունները և այլն:

10.«Սուտասանը» - Շահեր, որոնց ապահովագրությունը չի թույլատրվում:

-Դո՞ւ ինչ ես ուզում, ա՛յ մարդ,– հարցնում է թագավորը: - Ինձ մի կոտ ոսկի ես պարտ, եկել եմ տանեմ:

- Մի կոտ ոսկի՞– զարմանում է թագավորը: - Սո՛ւտ ես ասում, ես քեզ ոսկի չեմ պարտ:

- Թե որ սուտ եմ ասում, թագավորությանդ կեսը տուր:

- Չէ՛, չէ՛, ճշմարիտ ես ասում,– խոսքը փոխում է թագավորը:

- Ճշմարիտ եմ ասում՝ մի կոտ ոսկին տուր:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 984 հոդվածի համաձայն ապահովագրության ենթակա չեն հետևյալ շահերը՝

1) հակաօրինական շահերի ապահովագրությունը.

2) խաղերին, վիճակախաղերին և գրազին մասնակցելու հետևանքով առաջացած վնասների ապահովագրությունը:

Ի՞նչ իմանաս Ստեղծողի գաղտնիքները անմեկին...

Հովհաննես Թումանյան

Օգտագործված գրականություն

1. Հովհաննես Թումանյան, Հեքիաթներ, Երևան, 1999, 156 էջ:
2. Հովհաննես Թումանյան, Բանաստեղծություններ: Քառյակներ, Երևան, 2009, 154 էջ:
3. Հովհաննես Թումանյան, Ժողովրդական հեքիաթներ, պատմվածքներ, պոեմներ, բալլադներ, լեգենդներ, բանաստեղծություններ և քառյակներ, Երևան, 2011, 285 էջ:
4. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
5. Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին ՀՀ օրենք, Ընդունված է 2007 թվականի ապրիլի 9-ին:
6. https://hy.wikisource.org/wiki/ՀովհաննեսԹումանյան:
7. https://www.nairi-insurance.am/
8. Ապահովագրական գործ, ուս. ձեռնարկ, պրոֆ. Ա. Ճյուղուրյան, պրոֆ. Կ. Աբգարյան, Երևան, 2007, 576 էջ:

HOVHANNES TUMANYAN AND INSURANCE

MARTIROSYAN ARTAK
PhD student of Gavar State University

This article presents the link between Hovhannes Tumanyan's literary works and insurance. The article argues that Hovhannes Tumanyan's works can be used in the field of financial education as a method of presenting the different types of insurance, insurance principles and approaches. This article is intended for lecturers, students and for other people studying insurance.

Keywords: *Insurance, agricultural insurance, Hovhannes Tumanyan's literary works, financial education, types of insurance, liability insurance, property insurance, assistance insurance, accident insurance, cargo insurance.*

ОВАНЕС ТУМАНЯН И СТРАХОВАНИЕ

МАРТИРОСЯН АРТАК
Аспирант Гаварского государственного университета

В этой статье представлена связь между литературными произведениями Ованнеса Туманяна и страхованием. В статье утверждается, что работы Ованнеса Туманяна могут быть использованы в области финансового образования как метод представления различных видов страхования, принципов и подходов в страховании. Эта статья предназначена для преподавателей, студентов и для людей, заинтересованных в страховании.

Ключевые слова: *страхование, сельскохозяйственное страхование, литературные произведения Ованеса Туманяна, финансовое образование, виды страхования, страхование ответственности, страхование имущества, страхование помощи, страхование от несчастных случаев, страхование грузов.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 26.01.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 04.06.2020թ.: